2021, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (573)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորյա ուղերձը

Սիրելի՛ զավակներ Մեր ի Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս,

Մայր Այոռ Սուրբ Էջմիածնից հայրական սիրո Մեր ողջույնը, աղոթքն ու օրհնությունն ենք բերում ձեզ տարեմուտի այս երեկո:

Հնի եւ նորի սահմանագծին, երբ մեր հայացքն ուղղվում է դեպի ապագա, ծանր հոգով նաեւ վերհիշում ենք չարաղետ 2020 թվականը եւ սգում մեր հազարավոր զավակների եւ Արցախ աշխարհի զգալի մասի կորուստը: Անցնող տարում համավարակի եւ պատերազմի արհավիրքները կորստյան ցավ ու մահվան վիշտ տարածեցին հայրենական մեր կյանքում: Մեր հոգիներն ալեկոծեցին նաեւ Սիրիայում չընդհատվող պատերազմի ծանր հետեւանքները եւ աղետալի դեպքերը Լիբանանում: Հայաստան եւ Արցախ մեր երկրի առջեւ ծառացած քաղաքական, տնտեսական եւ սոցիալական մարտահրավերները, հայրենիքի սահմաններին անկայուն խաղաղությունը, ապագայի անորոշությունը, արդարեւ, տկարացրել են մեր ժողովրդի զավակների լավատեսության ոգին: Հուսախաբ ենք, այո՛, բայց Աստծուն ապավինած՝ լի ենք հավատով, որ պիտի հաղթահարենք դժվարին այս ճգնաժամը:

«Դու չես լքի նրանց, ովքեր փնտրում են Քեզ, Տեր» (Սաղմ. Թ 11): Սաղմոսերգուի այս խոսքերը հոգում ծրարած՝ մեր ժողովուրդը բոլոր ժամանակներում իր հուսավառ հայացքն ուղղել է դեպի գալիքը: Հայոց անկախ պետականության նվիրական տեսիլքն ու անհատնում ձգտումն իր սրտում ազգս հայոց զորությունն է ունեցել հառնելու ամենածանր փորձություններից, անգամ հայրենազրկումի եւ ցեղասպանության արհավիրքներից, եւ այսօր էլ, հավատում ենք, ներուժն ունի վերակազմակերպելու իր կյանքը, զորացնելու հայրենի պետությունը: Հայրենաշինության սրբազան առաքելությունը հաջողությամբ պիտի պսակվի միայն մեր ժողովրդի կարող ու առողջ բոլոր ուժերի համերաշխ մասնակցությամբ եւ միաբան ոգով: «Միաբանությունը,– ինչպես գրում է Մեծն Եղիշե վարդապետը,– բարի գործերի մայրն է, անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»:

Սիրելինե՛ր, Հայրապետիս հորդորն ու պատգամն է՝ ստեղծված լրջագույն իրադրության առջեւ զորանալ հավատով եւ ամրապնդել վճռականությունը, որպեսզի ամենայն հանձնառությամբ կառուցենք եւ սերունդներին ավանդենք հզոր, բարօր եւ անվտանգ հայրենիք:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ

Հունվարի 6-ին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հոգեւորոգ տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ու բարեմաղթանքները հղեց աշխարհասփյուռ հավատավոր հայ ժողովրդին՝ ամենքին փոխանցելով Տիրոջ սուրբծննդյան կենդանարար ավետիսը:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ նաեւ Ջրօրհնեքի արարողություն: Սուրբգրային ընթերցումներից, ջրօրհնյաց շարականների երգեցողությունից եւ Բարսեղ Մեծի աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ մյուռոնով օրհնեց ջուրը:

Օրհնությունից հետո սուրբ խաչը փոխանցվեց խաչի այս տարվա կնքահորը՝ օրերս Արիության մեդալի արժանացած զինծառայող, կրտսեր սերժանտ, շիրակցի Գոռ Պետրոսյանին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին ջրօրհնյաց խաչով օրհնեց բարեպաշտ ժողովրդին:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ»
(Յովհ. 1. 9):

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր ի հայրենիս եւ ի սփյուռս,

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին, աղոթական ոգով համախմբված մեր սուրբ եկեղեցիներում, օրհնաբանում ենք նորածին Փրկչին: Սուրբ Ծննդյան օրհնյալ այս օրը Բեթղեհեմի մսուրից ծագեց ճշմարիտ Լույսը՝ լուսավորելու համար մարդկանց հոգիները: «Այդ ճշմարիտ Լույսն էր, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալու»,– գրում է ավետարանիչը:

Աշխարհի փրկության համար մարդեղացած Աստվածորդու Սուրբ Ծնունդը ավետարանչի նման սրբազան շարականագիրը համեմատում է արեգակի ծագման հետ՝ ասելով. «Ծագեցիր Հորից՝ լուսավորելու արարածներին, Արդարության Արեգակ, Տե՛ր, փա՛ռք Քեզ» (Շարական Սուրբ Ծննդյան): Աստվածորդին եկավ փարատելու մեղքի ու մահվան խավարը եւ մարդկությանն առաջնորդելու դեպի իր Արարիչը: Փրկչի Ծննդյան համեստ քարայրից ճառագեց հոգեւոր նորոգության, հոգեւոր զորության արշալույսը:

Ծննդյան օրից Հիսուս մանկանը վիճակվեցին հալածանքներ: Փրկիչն Իր ընտանիքի հետ փախստական դարձավ Իր ծննդավայրից, երբ Նրա մահը ցանկացող Հերովդեսը կազմակերպեց մանուկների կոտորածը՝ կարծելով, թե սպանեց նորածին Աստվածորդուն եւ հաղթեց Նրան: Սակայն իրական հաղթությունը Քրիստոսինն էր, որ փրկչական Իր առաքելությամբ չարչարանաց ճանապարհը պսակեց հարության փառավոր հաղթանակով: Բոլոր դժվարությունների միջով անցնելով՝ Տերը հույս բերեց անկյալ մարդուն, փրկություն՝ մարդկությանը, որ ընկղմված էր անօրենությունների եւ կռապաշտության խավարի մեջ: Պատմության բոլոր ժամանակներում հերովդեսները

աղետ, ավեր ու թշվառություն են պատճառել մարդկությանը, չարի ներգործությամբ գլուխ են բարձրացրել հակառակությունն ու թշնամությունը, առաջադեմ ձեռքբերումների կողքին եղել են աղքատություն, կեղեքում ու անիրավություն: Եվ այսօր էլ մարդիկ՝ մեղքերով ծանրաբեռն, հեռանում են Աստծուց, աշխարհը ալեբախվում է քաղաքական խարդավանքներից, հասարակություններին տիրել է բեւեռացումների հանգեցնող նյութապաշտությունը, եւ արդարությունն ու ճշմարտությունը դարձել են հարաբերական արժեքներ: Հակասական ու անհանգիստ այս աշխարհում Հիսուս Քրիստոս ծագում է որպես Արդարության Արեգակ, Լույս ճշմարիտ՝ լուսավորելու մարդկության կյանքի ուղին:

Սիրելինե՛ր, Քրիստոսի հրաշափառ Ծնունդը հույսի եւ մխիթարության աղբյուր է մեր սրտաբեկ ժողովրդի համար հատկապես վշտաստանջ այս օրերին, երբ անդրադառնում ենք, որ մեր կյանքը եւս զերծ չեղավ կործանարար սխալներից եւ մեղանչումներից: Անկայուն խաղաղության եւ պատերազմի սպառնալիքների հանդիման չդրսեւորվեց անհրաժեշտ զգոնություն, հայրենիքի ու ժողովրդի շահը ստորադասվեց նեղ ձգտումներին ու նկրտումներին: Աստվածամերժ ոգին եւ օտարածին գաղափարներն ու բարքերը ներթափանցեցին մեր հասարակությունից ներս: Մեր կյանքը հեռու չեղավ կեղծիքից, զգրախոսությունից, անհանդուրժողությունից, ատելությունից ու թշնամանքից, որ սփռվում էր եւ շարունակում է սփռվել ամենատարբեր միջոցներով՝ մասնատելով մեզ եւ ցամաքեցնելով Քրիստոսի սերը մեր մեջ: Իսկ Ավետարանը վկայում է. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, եւ ինքն իր մեջ բաժանված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնա» (Մատթ. ԺԲ 25): Արցախյան պատերազմի աղետալի հետեւանքները տագնապի ու անորոշության զգացումներով են պաշարել մեր ժողովրդի զավակների հոգիները: Արցախ աշխարհի զգալի մասի կորուստը, մեր հերոս զավակների նահատակությունը, անօթեւան ու նյութական կարիքի մեջ գտնվող տեղահանված տասնյակ հազարավոր արցախցի մեր եղբայրների ու քույրերի, հազարավոր վիրավորների եւ զերեվարված հայորդիների ցավն ու վիշտը մեր ազգային կյանքը հայրենիքում ու սփյուռքում վերածել են մռայլ ու մթագնած գիշերվա: Այս խավարի, մղձավանջային այս իրականության մեջ այսօր պայծառորեն ծագում է Արդարության Արեգակը՝ լուսավորելու մեր ազգային ու հայրենական անդաստանը եւ Իր ջերմացնող զորությամբ բժշկություն պարգեւելու ազգիս վիրավոր հոգուն:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորյա ուղերձը

Սկիզբը՝ էջ 1

Աստծու Խոսքին ու քրիստոնեական արժեքներին հավատարիմ՝ հոգ տանենք միմյանց եւ ջերմագին սեր առ բազմաչարչար մեր հայրենիքը, մեր ջանքերն ու ուժերը մեկտեղենք ի նպաստ ազգային ու հայրենական մեր կյանքի նորոգության ու պայծառության: Մեր հայրենիքը հզորացնելու, մեր պետականությունը վտանգներից զերծ պահելու, մեր սահմանները խաղաղ ու ապահով դարձնելու եւ համայն մեր ժողովրդի կյանքը շենացնելու պատասխանատվությունն ամենքիս է: Այս գիտակցությամբ հայրենիքի նոր օրը խարսխենք եղբայրսիրության, արդարության եւ օրինահարգության վրա:

Նոր տարվա սեմին միասնաբար հայցենք, որ Տիրոջ Սուրբ Ծննդյան շնորհները «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ավետիսով տարածվեն մեր հայրենի եզերքներում: Աղոթենք ու երախտագետ սրտով հիշենք մեր նահատակներին, շուտափույթ վերադարձ մաղթենք գերեվարվածներին, ապաքինություն՝ վիրավոր մեր զավակներին եւ խնդրենք Աստծու զորակցությունն ու օրհնությունը նրանց, մեր հերոսների ընտանիքներին եւ համայն մեր ժողովրդին: Աղոթենք հայրենյաց պաշտպանության դիրքերում գտնվող մեր բանակի քաջարի զորականների եւ բոլոր նրանց համար, ովքեր տարեմուտը դիմավորում են ծառայության մեջ: Աղոթքով հիշենք եւ համախարակից մահացած մեր ժողովրդի զավակներին:

Ամենագութ Աստված, բարերար Քո կամքով եւ ամենաառատ ողորմությամբ թող 2021 թվականը լինի խաղաղության, ազգաշեն ու հայրենանպաստ իրագործումների տարի եւ մխիթարություն բերի մեր սրտերին, զորություն եւ հաղթություն՝ հայոց կյանքին:

Աստված պահապան մեր հայրենիքին եւ ժողովրդին:

Բարի, օրհնյալ տարի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դասգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ

Սկիզբը՝ էջ 1

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, մարդեղացյալ Աստվածորդու անբավ սիրուն եւ փրկության շնորհին ապավինելով՝ մենք դարերի ընթացքում հաղթահարել ենք պատերազմների, աղետների տառապանքներն ու զրկանքները, հուսախաբությունն ու հուսալքությունը եւ կերտել մեր կյանքի հաղթանակները: Այս օրերին եւս մեր հավատքը կենդանի է նույն վստահությամբ: Մենք ի զորու ենք վերստին հզորացնելու ու շենացնելու մեր հայրենիքը եւ մեր կյանքի նոր զարթոնքը իրականություն դարձնելու՝ աշխարհասփյուռ հայության ներուժի ու ջանքերի մեկտեղումով, Հայաստան ու Արցախ համերաշխ ու միաբան հասարակությամբ, զարգացած տնտեսությամբ, գիտությամբ ու կրթությամբ, նորագույն զինտեխնիկայով համալրված բարձր մարտունակությամբ բանակով: Ինչպես պատերազմի տագնապալի օրերին, մեր սրտերը պիտի բաբախեն հայրենիքի սիրով, մեր մտքերն ու նվիրական զգացումները փարված լինեն հայրենի սրբազան երկրին: Հայրենական կյանքի կայունությունը հաստատուն պահելու, երկիրը վտանգների չառաջնորդելու, առկա ճգնաժամերը հաղթահարելու, արտագաղթի աղետը կասեցնելու համար հարկ է ամեն հանձնառություն, ամեն զոհաբերություն: Մեր ազգի ու ժողովրդի համար օրհասական փորձության այս պահին ամուր մնանք հույսով ու հավատով եւ Տիրոջ կենարար զորությամբ զոտեպինդ՝ ուժ առնենք արհավիրքներից հառնելու, երկնառաք օգնականությամբ փարատելու մեզ պարտադրված այս թանձր խավարը եւ լուսավորելու մեր կյանքի նոր հորիզոնները:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության այս հոգեւորոգ օրը հայցենք, որ Աստծու փրկության շնորհին ապավինած՝ ընթանանք դեպի մեր իղձերի իրականացումը եւ մեր արդար իրավունքների հաղթանակով պսակումը: Աղոթենք, որ Սուրբ Ծննդյան ավետաբեր լույսով միշտ լուսավորվի երկնակամարը մեր ազգային ու հայրենական կյանքի, հավետ պայծառ լինի մեր Սուրբ Եկեղեցին՝ հոգեւոր դասի արդյունավոր ծառայությամբ ու հավատացելոց նվիրյալ ընթացքով, եւ հայոց աշխարհը պարուրվի մարդացյալ Փրկչի սիրով ու պարգեւած հույսով: Թող Տերը խաղաղություն պարգեւի համայն աշխարհին, մարդկանց հոգիներին, Իր խնամքի մեջ խաղաղ ու ապահով պահպանի հայրենի մեր երկիրը՝ Հայաստանն ու Արցախը, եւ շնորհի բարօր ու շեն կյանք աշխարհասփյուռ ազգիս հայոց, այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Զեզ եւ մեզ մեծ աւետիս:

Սուրբծննդյան հայրապետական այցելություններ

Սուրբ Ծննդյան տոնին ընդառաջ՝ դեկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց մի շարք այցելություններ:

Վեհափառ Հայրապետը Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանի եւ Մուշեղ եպս Բաբայանի ուղեկցությամբ եղավ Կոտայքի թեմի ծաղկաձորյան ճամբարում, ուր իր զորակցությունն ու օրհնությունը բերեց ճամբարում ապաստան գտած՝ Հադրութից տեղահանված 45 արցախցիներին:



Նորին Սրբությունը զրուցեց արցախցի ընտանիքների հետ՝ տեղեկանալով ապագայի վերաբերյալ նրանց ծրագրերին, ապա սուրբծննդյան նվերներ բաշխեց տարեցներին եւ երեխաներին:

Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նաեւ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում բուժում ստացող վիրավոր զինվորականներին: Կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Արմեն Չարչյանի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետն այցելեց բոլոր հիվանդասենյակները՝ իր աղոթքը կատարելով հայրենիքի պաշտպանության սրբազան առաքելության ընթացքում վիրավորված քաջորդիների համար եւ հետաքրքրվելով նրանց ապաքինման ընթացքով, առկա կարիքներով:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի ուղեկցությամբ այցելեց Հայաստանի հարավային ուղղությամբ տեղակայված N զորամասի մարտական դիրքեր:

Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց սահմանապահ զինվորականներին՝ մեծապես արժեւորելով հայ զինվորի ու հրամանատարի անձնվեր ու անմնացորդ ծառայությունը հայրենիքին: Ջերմ զրույցի ընթացքում Վեհափառն ընդգծեց, որ Հայոց բանակը եղել եւ մնում է հիմնական երաշխավորը անկախ պետականության պահպանության եւ հայրենաբնակ մեր ժողովրդի պաշտպանության:

Նորին Սրբությունը հաստատեց, որ արցախյան պատերազմում հայրենյաց պաշտպանների դրսեւորած արի ոգին, նախանձախնդրությունը, անձնազոհ եւ եղբայրասեր կերպարը միայն հպարտության զգացումով են լցնում իր հոգին: Վեհափառը նաեւ աղոթքով հիշեց նրանց ծառայակից նահատակ եղբայրներին եւ պատմության մեջ արձանագրված նրանց սխրանքները, որոնք ուժ պիտի տան համայն մեր ժողովրդին՝ կերտելու հայրենիքի նոր լուսավոր օրը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, սրբապատկերներ ընծայելով զինվորներին, անփորձանք եւ ապահով ծառայություն մաղթեց ամենքին՝ նշելով, որ մեր զինականները մշտապես Հայոց Հայրապետի եւ հայ եկեղեցականների աղոթքներում են:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի Ճրագալույցի Պատարագը Ս. Գայանե վանքում

Հունվարի 5-ին մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում մատուցվեց Ճրագալույցի Պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները, Մայր Աթոռի բարերարները եւ ուխտավոր բազում հայորդիներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Մինչ սրբազան պատարագը կատարվեց Երեկոյան ժամերգություն, ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, այնուհետեւ Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիելի մարգարեությունը:

Ս. Պատարագի ընթացքում Մուշեղ սրբազանն իր քարոզում անդրադարձ կատարեց Քրիստոսի Սուրբ Ծննդյան խորհրդին՝ նշելով, որ ամենքը կրկին իրենց քայլերն ուղղել են եկեղեցիներ՝ զորանալու եւ խաղաղվելու փափագով, որ բոլորը 2021 թվականի առաջին օրերին մեկտեղվել են՝ աղոթքով միանալու եւ ապրող, կենդանի ու զինվորյալ եկեղեցի լինելու կենսունակությունը պատարագյալ Հիսուսով սնելու:

«Խաղաղությունն է միացնում մեզ: Խաղաղության փնտրտուքով է ազգը հայոց փարվել Քրիստոսին, ընդունել Նրա իշխանությունը եւ ապավինել Նրա անսահման խաղաղությանը: Խաղաղաբեր այդ հզոր Իշխանի շուրջն ենք հավաքված միշտ՝ զորանալու Նրանով եւ հույսով լցվելու: Եվ այս պահին, սիրելի՛ հավատացյալներ, այդ հզոր Իշխանի ծննդյան ավետիսն է, որ հրեշտակների կողմից փողահարվում է ի լուր աշխարհի. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության այս օրը Հայաստանի, Արցախի եւ աշխարհասփյուռ մեր եկեղեցիներում համախումբ աղոթք ենք բարձրացնում առ Աստված եւ ուրախությամբ փառաբանում Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշալի ծնունդը: Այո՛, հրաշալի, որովհետեւ ամեն նոր ծնունդ բարի է եւ հրաշալի:

Սիրելիներ, արդեն ամիսներ է, ինչ մեր ազգը չի ուրախանում, երբ մեր ազգի գրեթե յուրաքանչյուր զավակի դեմքին ուրախությունը կիսատ է, ժպիտը՝ ցավով լեցուն: Կարծես դատարկվել է մարդը՝ զրկվել ինքնության արժեհամակարգից եւ պարզապես ապրում է օրը՝ ֆիզիկական գոյությամբ:

...Հայրենազրկության եւ պարտության իրականությունն է յուրաքանչյուրիս աչքի առաջ, որ հանդարտություն չի տալիս ո՛չ մտքին, ո՛չ սրտին, ո՛չ հոգուն եւ ո՛չ էլ մարմնին: Կորստի անսահման զգացողություն եւ սպասումի անհաղթահարելի դող հայրերի, մայրերի, քույրերի, կանանց եւ զավակների դեմքին:

Սիրելի՛ հավատացյալներ, ծննդյան ավետիսի ժամանակ հրեշտակապետը Մարիամին բացահայտեց նաեւ այն ամենը, ինչ լինելու էր նրա զավակին. չարչարանք, տառապանք, խաչ եւ մահ: Աստվածամայրը, քաջ իմանալով, սակայն այդ «բոլոր ասվածները պահում էր իր մեջ եւ իր սրտում խորհում» (Ղուկ. Բ 19):

Դո՛ւք, հայուհիներ, որ Աստվածամորն ունեք ձեզ օրինակ եւ հայ ընտանիքի տիպարը Հովսեփ արդարի եւ Մարիամ Աստվածածնի խոնարհ ընտանիքն է, դո՛ւք, հայ մայրեր, երբ արու զավակ եք լույս աշխարհ բերում, արդեն իսկ ձեր սրտում գիտեք, որ մի օր կանգնելու են մեր հայրենիքի պաշտպանության համար: Եվ գիտեք նաեւ, որ այդ սուրբ գործը երբեմն պսակվում է նահատակությամբ:

Այսօր, երբ մեր հայրենիքը եւ մեր ժողովուրդը թշնամիներով է շրջապատված, երբ իր անկայուն խաղաղությունը պահում է իր որդիների արյան գնով, երբ պայքարում եւ մաքառում է իր իրավունքների համար առավել, քան երբեւէ, ուժեղ պետք է լինենք, համախումբ, միաբան եւ սիրով պետք է հավատանք վաղվա լուսավոր օրվան, պետք է չկորցնենք մեր հավատն Աստծու արդարության եւ ողորմածության հանդեպ: Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց մեր փրկության համար: Այս խոսքերը բազմիցս արտասանվել են այս խորանից, սրանք աստվածային անհուն սիրո ամենավառ խոսքերն են թերեւս: Մեր Փրկչի ծնունդով եւ աշխարհ գալով մարդկության հանդեպ աստվածային սիրո, մեծագույն սիրո խորհուրդն ենք տեսնում: Աստծու հանդեպ եւ միմյանց հանդեպ անհուն սիրով պիտի հաղթահարենք դժվարությունները, զրկանքները եւ նեղությունները, որով անցնում է մեր հավատավոր ժողովուրդը»,– ասաց սրբազան հայրը՝ հավելելով, որ Քրիստոսի ծնունդն այն միակ հույսն է, որով պիտի փրկվենք եւ պիտի նորից կյանք առնենք այս հուսալքված, բարոյազրկված, ընկճված, ապագայի հանդեպ մեր հույսը կորցրած օրերում:

Մուշեղ եպիսկոպոսը նշեց նաեւ, որ Հիսուս Քրիստոսի ծնունդով աշխարհը փոխվեց, Հիսուս մուտք գործեց աշխարհ, որպեսզի մարդիկ փրկության շնորհին արժանանան եւ ժառանգեն երկնքի արքայությունը:

«Առավել եւս հիմա մենք պիտի հավատանք եւ պիտի գրկաբաց ու սրտաբաց ընդունենք մանուկ Քրիստոսին մեր մեջ, որպեսզի փրկության հույս ունենանք, եւ այդ հույսով պիտի փոխվի այս ծանր վիճակը, եւ պիտի փրկվի մեր հայրենիքը: Այո՛, վստահաբար պիտի հավատանք, որ մեր Տիրոջ ծնունդով այլեւս փոխվելու են մեր սրտերը, մեր հոգիները, մեր կյանքը եւ մեր ապագան: Աղոթակից լինենք Նարեկացուն՝ կրկնելով. «...երբ ողորմությանդ փառքի անստվեր ճաճանչները ծագեն, կհալչեն մեղքերը, կխորտակվեն կապանքները... կկենդանանան մեռյալները, կբուժվեն զարկվածները, եւ վերքերը կառողջանան: Տեղի կտան տխրությունները, կնահանջեն հեծությունները... կչքանան չարիքները, հուսահատությունները կհալածվեն, եւ կթագավորի ձեռն Քո ամենակարող քավիչդ բոլորի»:

Սիրելիներ, հենց այս աստվածային անհուն ողորմությանը պիտի ձգտենք արժանանալ մեր աստվածահաճո եւ խոնարհ կյանքով, հավատքով ու աղոթքներով»,– ընդգծեց պատարագիչ սրբազանը՝ հորդորելով ամենքին ամուր պահել հավատքը եւ սիրել, սիրել հայրենիքը առավել, քան երբեւէ, առավել անպայմանական, քան երբեւէ, առավել ուժեղ, քան երբեւէ, սիրել եկեղեցին, սիրել մերձավորներին, այդ սիրով, ոգով ու հավատով օգուտ բերել հայրենի երկրին, աղոթել հայրենիքի սահմանների անսասանության համար, աղոթել իրենց կյանքը հայրենիքի համար զոհած հերոս եղբայրների հոգիների հանգստության համար, գերության մեջ գտնվող եւ անհայտ կորած իրենց եղբայրների, որդեկորույս մայրերի՝ Սուրբ Հոգով մխիթարության եւ վիրավորների շուտափույթ բժշկության համար:

Վերջում Մուշեղ սրբազանը կոչ արեց հավատավոր ժողովրդին սուրբննդյան հրաշափառ ավետիսով զորացած ուխտել եւ խոստանալ, որ հաղթահարելու են ցավը հավատքով, ապրելու են ամեն մի օրը հույսով եւ էլ ավելի շատ են լցվելու սիրով, որպեսզի հաղթեն սիրով, քանզի Քրիստոս ծնվեց եւ հայտնվեց:

Նախատոնակի արարողության ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը բարձրացավ ս. Խորան եւ վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Քրիստոսին խորհրդանշող լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց տարվա առաջին Տնօրհնեքը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը գերեվարվածների եւ անհայտ կորածների համար աղոթքի արարողության ընթացքում

«Հետպատերազմյան այս ծանր օրերին լինենք միաբան ու քաջ, ամուր մնանք հավատի ու հույսի մեջ».

Գարեգին Բ Կաթողիկոս

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հունվարի 10-ին բոլոր եկեղեցիներում սուրբ Պատարագի ավարտին կատարվեց մասնավոր աղոթք՝ արցախյան պատերազմի ընթացքում գերեվարվածների ու անհայտ կորածների եւ նրանց տունդարձի համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Ս. Գայանե վանքում: Պատարագի վերջում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց մասնավոր աղոթք, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկա հավատավոր ժողովրդին:

«Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետեւ Աստծու սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ»

(Հռոմ. Ե 5):

Սիրելի՛ հավատավոր հայորդիներ,

Այսօր համախմբվել ենք մեր սուրբ եկեղեցիներում՝ աղոթք բարձրացնելու առ Աստված՝ արցախյան պատերազմի ընթացքում գերեվարված եւ անհայտ կորած մեր քաջորդիների համար:

Մեր զինվորների հայրերի ու մայրերի, կանանց ու երեխաների հետ բոլորս մեր սրտերում փայփայում ենք մեր զավակների տուն վերադարձի հույսը: Մեր հույսը պարզ մի զգացում, ցանկություն կամ լավատեսություն չէ, այլ Աստծու հավատարիմ սիրո վրա հիմնված վստահություն: Այն երբեք չի ամաչեցնում, ինչպես ասում է առաքյալը, քանզի Աստված Սուրբ Հոգու միջոցով Իր սերը սփռել է մեր սրտերում: Այդ հույսն է, որ մեզ զորացնում է ջերմեռանդ աղոթելու եւ անվհատ հետամուտ լինելու գերյալ մեր զավակների շուտափույթ ազատությանը, անհայտ կորածների հայտնաբերմանը:

Շարունակությունը՝ էջ 4

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը գերեվարվածների եւ անհայտ կորածների համար աղոթքի արարողության ընթացքում

Սկիզբը՝ էջ 3

Արցախյան հակամարտությունը, ցավալիորեն, հնարավոր չեղավ կարգավորել բանակցային խաղաղ գործընթացով: Ադրբեջանական իշխանությունները ռազմատենչ ոգով հակված էին խնդիրը լուծելու ռազմական ճանապարհով, ինչը եւ տեղի ունեցավ: Պատերազմը խաթարեց տարածաշրջանի խաղաղությունն ու անվտանգությունը՝ պատճառելով մեր ժողովրդին մարդկային եւ տարածքային ծանր կորուստներ եւ անհուն վիշտ ու ցավ: Նույն վարքագիծը ադրբեջանական իշխանությունները շարունակում են նաեւ այսօր՝ տարածքային նկրտումների հետ մեկտեղ շահարկելով ռազմագերիների վերադարձման, անհայտ կորածների որոնման եւ զոհվածների մարմինների արտահանձնման խնդիրը:

Գերության մեջ հայտնված մեր զավակները անմարդկային վերաբերմունքի են ենթարկվում, ոտնահարվում են գերյալներին վերաբերող միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Անտեսվում են նաեւ մարդկային կյանքը, արժանապատվությունը եւ իրավունքները արժեւորող երկրների եւ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների դիմումներն ու հորդորները: Մեր կոչն ու ակնկալությունն է, որ արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ի նպաստ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի հետ Մեր եռակողմ հանդիպումների ոգուն համաձայն՝ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդը անհրաժեշտ նպաստ բերի գերիների ազատության եւ զոհված ու կորուսյալ զինվորներին առնչված մարդասիրական գործողություններին:

Պատերազմի դադարեցման, խաղաղարար ու մարդասիրական գործունեության մեջ ներդրած անձնական ջանքերի համար Մեր երախտագիտությունն ենք հայտնում Ռուսաստանի Դաշնության նախագահ տիար Վլադիմիր Պուտինին: Շնորհակալ զգացումներով եղբայրական Մեր սերն ենք հղում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին՝ այս դժվարին օրերին մեր ժողովրդին եւ Եկեղեցուն ցուցաբերած զորակցության համար: Մեր գնահատանքն ենք ցանկանում արտահայտել նաեւ Արցախում տեղակայված խաղաղապահ ուժերին եւ բոլոր կազմակերպություններին ու անձանց, որոնք շարունակական միջոցներ են ձեռնարկում իրավիճակի եւ առկա խնդիրների արդար հանգուցալուծման համար: Միայն արդարության հիմքի վրա է խաղաղությունը հաստատուն մնում, ինչպես եւ վկայում է Սուրբ Գիրքը. «Ողորմությունն ու ճշմարտությունը պիտի հանդիպեն, արդարությունն ու խաղաղությունը պիտի համբուրվեն» (Սաղմ. ՁԴ 11):

Սիրելի՛ հավատավոր զավակներ, հետպատերազմյան այս ծանր օրերին լինենք միաբան ու քաջ, ամուր մնանք հավատի ու հույսի մեջ՝ մեզ պատուհասած պատերազմի արհավիրքները հաղթահարելու, դժվարություններին դիմակայելու եւ հայրենիքի լուսավոր օրը կերտելու համար: Մեր հորդորն է նաեւ մեր Սուրբ Եկեղեցու սպասավորներին՝ նույն տեսլականով եւ եռանդով շարունակել հովվական խնամք եւ կարելի աջակցություն ցուցաբերել պատերազմից տուժածներին եւ Աստծու խոսքով, Ավետարանի հույսի ու հավատի պատգամներով մխիթարելու գերության մեջ գտնվողների ու անհայտ կորածների ընտանիքներին:

Այս պահին, սիրելինե՛ր, սրտաբուխ աղոթքը մեր շուրթերին, երկնավոր Տիրոջից խնդրենք Ամենասուրբ Երրորդության օրհնությունն ու օգնականությունը մեր հայրենիքի եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքին՝ հայցով, որ երկնային շնորհները, սերն ու խաղաղությունը լինեն մեզ եւ ամենքի հետ: Հավատավոր Մեր զավակներիդ աղոթակցությամբ Մեր հայցն ենք բարձրացնում առ մարդասեր Փրկիչ Տերը՝ գերյալների, անհայտ կորածների, վիրավորների եւ նրանց ընտանիքների համար:

Ամենագութ եւ ամենողորմ Աստված, որ Միածին Որդուդ առաքեցիր՝ սրտով բեկյալներին բժշկելու եւ գերիներին ազատություն քարոզելու, աղաչում ենք Քեզ, աստվածային Քո գթառատությամբ ողորմիր մեր գերիներին, որ ապահով եւ անվտանգ տուն վերադառնան:

Քո խաղաղության հրեշտակին ուղարկիր՝ զորացնելու բոլոր հայրերին ու մայրերին, հարազատներին, կանանց ու երեխաներին, որոնք սրտի թրթիռով սպասում են գերեվարված կամ անհայտ կորած զինվորների վերադարձին, եւ նրանց պարգեւիր ուրախությունը տեսնելու իրենց սիրելիներին:

Զորացրու, Տեր, բոլոր անձանց, որոնք եռանդուն ջանքեր են ներդնում գերիներին ազատելու, անհայտ կորածներին գտնելու եւ զոհված մեր նահատակների անթաղ մարմինները հայտնաբերելու եւ ընտանիքներին հանձնելու համար:

Արդ, բարերար եւ բազումողորմ Աստված, ունկնդիր եղիր Քեզ հուսացող Քո ժողովրդի ծնրադիր աղոթքներին ու խնդրանքներին, օգնական ու ապավեն եղիր նրանց եւ պարգեւիր քաջություն ու ոգու արիություն դժվարությունների ու նեղությունների մեջ, լցրու նրանց սրտերը բարի ու լուսավոր օրվա հույսով ու հավատով:

Ի խորոց սրտի աղոթում ենք եւ հավատում, ամենակալ Տեր Աստված, որ ազատություն պիտի պարգեւես մեր գերյալ զավակներին, որոնց վերադարձին անհամբեր սպասում ենք բոլորս, որպեսզի միասին՝ նրանց հետ գոհությամբ փառավորենք Ամենասուրբ Երրորդությանդ՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Այցելություններ «Եռաբլուր» դանթեոն

Հունվարի 1-ին, ինչպես նաեւ հունվարի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ, այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն: Ծաղկեպսակների զետեղումից հետո Վեհափառ Հայրապետը եւ եպիսկոպոսները աղոթք բարձրացրին առ Աստված՝ նահատակ քաջորդիների հոգիների հանգստության եւ խաղաղության համար, որից հետո այցելեցին նաեւ մեր հերոս զավակների շիրիմներին: Հունվարի 7-ի այցի ժամանակ կատարվեց նաեւ հոգեհանգստյան կարգ:

Հայրապետական սրբատառ կոնդակով հիմնվեց Մասյացոտնի թեմը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ հայրապետական սրբատառ կոնդակով հունվարի 11-ին Հայաստանում՝ Արարատի մարզում, հիմնվեց Մասյացոտնի թեմը:

Նորաստեղծ թեմի առաջնորդի պաշտոնում ծառայության է կոչվել Գեւորգ եպս Սարոյանը:

Հայրապետական կոնդակում մասնավորապես ասվում է.

«ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Արարատի մարզի հաւատաւոր Մեր սիրելի զաւակներիդ:

Գոհութիւն ենք մատուցում Ամենակալն Աստծուն, որ մարզում բարօր ու կազմակերպուած ընթացք ունեն գործող ծուխերը, եկեղեցական հաստատութիւնները, անկախութեան տարիներին կառուցուել են նոր եկեղեցիներ, վերանորոգուել հին աղօթավայրեր՝ ապահովելով հոգեւոր-եկեղեցական կեանքի առաջընթացը: Մեր գնահատանքն ենք բերում Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանին՝ իր առաջնորդական փոխանորդութեան ընթացքում մարզի հաւատաւոր հայորդիների հոգեւոր խնամքի, եկեղեցականների ծառայութեան արդիւնաւէտ կազմակերպման, այս տարածքում հոգեւոր-եկեղեցական կեանքի բարեզարդման գործում ներդրած ջանքերի համար:

Հաւատաւոր հայորդիների հոգեւոր կարիքների բաւարարման եւ հոգեւոր-եկեղեցական կեանքի զօրացման համար եկեղեցական մեր անդաստանում միշտ վերակազմակերպուել են թեմերը եւ հիմնադրուել նոր թեմեր: Այսօր Հայրապետական այսու կոնդակով Արարատեան Հայրապետական թեմից առանձնացնելով Արարատի մարզը եւ մարզի ծուխերը միաւորելով՝ հաստատում ենք Մասեացոտնի թեմը՝ Արտաշատ առաջնորդանիստ քաղաքով ու կենտրոնով: Թեմի առաջնորդի պաշտօնում ծառայութեան ենք կոչում Գերաշնորհ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյեանին:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Մասեացոտն նորաստեղծ թեմի հոգեւոր դասին, եկեղեցական վարչութեանց պատուաւոր անդամներին, մաղթում եկեղեցաշէն ու ազգաշահ գործոց ձեռքբերումներ: Վստահ ենք, որ Տիրախնամ թեմի հաւատաւոր Մեր զաւակները նոր քաջալերութեամբ ու կորովով պիտի զօրակից դառնան թեմական առաջնորդին, շարունակեն սատար լինել հոգեւորականաց ծառայութեանը՝ ի խնդիր թեմի շինութեան, հոգեւոր-եկեղեցական կեանքի բարեզարդման:

Աղթում ենք, որ Բարերարն Աստուած միշտ շէն ու բարգաւաճ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին իր թեմական կառոյցներով՝ յարանորոգ յաջողութիւններ շնորհելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին: Թող Տիրոջ ամենախնամ Սուրբ Աջի ներքոյ միշտ պայծառ ու անսասան մնայ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

«Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ ճշմարտութեամբ եւ սիրով եղիցին ընդ ձեզ» (Բ Յովհ. 3)

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 11 Յունուարի
յամի Տեառն 2021 եւ ի թուին հայոց ՌՆՀ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1113»:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

1920 թվականի հայ-թուրքական պատերազմի դասերն ու այսօրվա իրականությունը...

Մեր պատմության տխուր եւ ողբերգական էջերից մեկը 1920 թվականի հայ-թուրքական պատերազմն է, որի արդյունքներով գծագրվեց չափազանց անբարենպաստ մի իրավիճակ, որում հայտնվել է հայությունը արդեն հարյուր տարի:

1920 թ. սեպտեմբերի 23-ին քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի հանրապետության վրա: Թուրքերը նպատակադրվել էին ոչ միայն գրավել Արեւելյան Հայաստանը, այլեւ բնաջնջել դեռեւս ողջ մնացած արեւելահայության մնացյալ հատվածին, ինչը չէին կարողացել անել 1918 թվականի ընթացքում: Թեեւ, Մուդրոսի համաձայնագրով, Թուրքիան պարտված կողմ էր Առաջին համաշխարհային պատերազմում, սակայն նրա զավթողական ու թալանչիական պլաններն ու էությունը չէին փոխվել: Թուրքական մեծ ու փոքր մասշտաբի առաջնորդներն այդ օրերին էլ կրկնում էին, որ իրենց նպատակն է վերամիավորվել հին հայրենիքի՝ Թուրանի հետ, եւ դրա համար կարեւոր էին համարում, որ իրենց հին ու նոր հայրենիքներն իրար միացնող ճանապարհն ուրիշների տիրապետության տակ չլինի:

Քեմալականները եւս ժառանգել ու որդեգրել էին հայ ժողովրդի հանդեպ զավթողական ու բնաջինջ նույն քաղաքականությունը, ինչ սուլթան Համիդն ու երիտթուրքերն էին գործադրում: Երկու տարի քեմալականները գաղտնի կերպով, սակայն խնամքով ու հետեւողականորեն նախապատրաստում էին իրենց հարձակումը Հայաստանի վրա: Բազմաթիվ ու բազմաբնույթ փաստեր վկայում են վերոնշյալ իրողությունը: Այսպես՝ դեռեւս 1920 թ. գարնանը, երբ խորհրդային կարմիր բանակը գտնվում էր Դաղստանում, այնտեղ էր նաեւ թուրքական զինյալ ուժերի հրամանատար, հայտնի հայատյաց Խալիլ փաշան, որը դիմում է 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանը՝ թուրքական ու խորհրդային համատեղ ուժերով օկուպացնել Հայաստանը: Բոլշեւիկյան ականավոր գործիչ Սերգեյ Կիրովի (որն այդ ժամանակ վերոնշյալ բանակի ղեկավարության կազմում էր) վկայակոչմամբ՝ սույն առաջարկը մերժվում է:

Թուրքական հաջորդ նպատակադրված արշավանքը պետք է տեղի ունենար 1920 թ. ամռանը, սակայն այս անգամ էլ այն հետաձգվում է Ռուսաստանի միջամտությամբ:

Այնուամենայնիվ, 1920 թ. աշնանը թուրքերը հարմար պահ ու առիթ գտան Հայաստանի վրա հարձակվելու: Թուրքերը լավ էին նախապատրաստվել այս պատերազմին եւ ունեին նաեւ քանակական գերակշռություն: Թուրքական 60 հազարանոց տեղը-տեղին սպառազինված բանակի դեմ կանգնած էր 30 հազարանոց հայոց զինուժը: Բացի դա՝ Հայաստանի հանրապետությունն անկումային վիճակում էր՝ տնտեսական, ֆինանսական եւ բարոյահոգեբանական առումներով: Թուրքական զորքի հարձակմանը զուգընթաց ծավալվում էին ներքին խմորումներ եւ խլրտումներ Հայաստանի մահմեդականներով լցված շրջաններում: Հայկական բանակի ունեցած անհաջողությունների եւ պարտությունների պատճառները պայմանավորված էին նաեւ սպայական կազմի եւ շարքայինների միջեւ գաղափարական միասնության բացակայությամբ, սպայության եւ խմբապետների միջեւ եղած հակասությամբ: Հայ զինվորներին բարոյալքման էին մղում թուրքական ու բոլշեւիկյան կողմերի ցուցաբերած գաղափարական դիվերսիան, ինչպես նաեւ երկրում ձեւավորված ընդհանուր հուսահատական տրամադրությունները: Նույնիսկ խորհրդային գաղափարախոսներն են ընդունել, որ Հայաստանի՝ այդ ժամանակվա բոլշեւիկյան կազմակերպությունների ղեկավարները, անկարող լինելով ճշմարտացիորեն հասկանալու քեմալականների քաղաքական խարդավանքներն ու անբեկանելի հայատյացությունը, քեմալական շարժումը «ազատագրական համարելով, սկսեցին նրանց պրոպագանդել որպես բոլշեւիկների դաշնակիցներ(ի), սովետական իշխանության կողմնակիցներ(ի) (հավելումները.– Ա. Կ.-ի)» (*Ս. Խ. Կարապետյան, 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը եւ Սովետական Ռուսաստանը, Ե., 1965 թ., էջ 32*): Վերոհիշյալ սխալ ու անմիտ տեսակետի կողմնակիցն էր նաեւ Ալեքսանդրապոլի (Գյումրի) բոլշեւիկյան պարբերականը՝ «Կոմունիստ» թերթը, որը 1920 թ. նոյեմբերին քեմալականների զավթողական հայաջինջ պատերազմը բնութագրեց որպես դաշնակցական ռեժիմի դեմ ուղղված քաղաքացիական պատերազմ, որը «...ճնշված հայ ժողովրդի դեմ բաց է անում մի նոր դարաշրջան: Ահա թե ինչու բանակայինները հերոսաբար չկռվեցին թուրքական բանակի դեմ, իսկ Ալեքսանդրապոլի կոմունիստ ղեկավարները, նոյեմբերի 5-ին դուրս գալով բանտից, ստեղծեցին ռեւկոմ եւ որոշեցին գործակցել քեմալականների հետ» (*նույն տեղում*): Հենց այդպիսի աննեռելիորեն սխալ քարոզչության արդյունքում էր, որ որոշ վայրերում հայ գյուղացիները աղ ու հացով էին դիմավորում «ազատարար» եւ «հեղափոխական» հռչակված ասկյարներին:

Իհարկե, շատ շուտով այդ կեղծիքը մերկացվեց, եւ բոլորը տեսան եւ հասկացան, որ «հեղափոխական» պիտակի ներքո հայտավորված թուրքը նույն՝ ցեղասպան, հայասպան բարբարոսն է, նույն՝ միջնադարյան վանդալն ու ելուզակը: Ավազակների ու բարբարոսների հորդաների անխիղճ ու արյունարբու գործողությունների ներքո կրկին ավերվում էր հայոց երկիրը, սպանվում էին անմեղ ու անզեն բնակիչները:

Շարունակությունը՝ էջ 6

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24

ՊՈԵՄՆԵՐ

Գաղափարական ու գեղագիտական ինչ նպատակ էր հետապնդում երիտասարդ Պատկանյանը՝ անտիկ ժամանակների այս հերոսին կերպավորելով: Նրան գրավել է հերոսականությունը, հանուն ազատության մաքառելու, թեկուզ օտար երկրում արդարության համար նահատակվելու պատրաստակամությունը, որի կրողն է Զարմայրը: Գրողի ժամանակների հայ երիտասարդը մեր նախնի Զարմայր նահապետին աչքի առաջ պետք է ունենար եւ պատրաստ լիներ իր հայրենիքի թշնամիների դեմ նրա օրինակով մաքառելու:

Երկրորդը՝ *«Պանդուխտ հայ ի Փարեզ»* երկը, որն ընդամենը 149 տող է, պարզապես հեղինակի խորհրդածությունն է «Ի գերեզմանի Լեւոն Վերջին թագավորի հայոց»: Երիտասարդ Պատկանյանը պոեմում իրագործել է հետաքրքիր մտահղացում. նա երեւակայությամբ Փարիզ է հասել ոչ թե զբոսանքի ու վայելքի նպատակով, այլ Պանթեոնում գտնելու Կիլիկիայի 1393 թ. վախճանված վերջին ապաբախտ արքայի՝ Լեւոն VI Լուսինյանի գերեզմանը եւ պահապան դառնալու նրա մասունքներին: Լեւոն VI-ն ընկալվում է որպես հայոց անցյալի փառավոր արքաների շարունակություն եւ կործանված պետականության խորհրդանիշ, որին հեղինակը հաղորդում է իր արդիական մտորումներն ու ստանում հետաքրքիր արձագանք: Ինչն է համարում հեղինակը Լեւոն արքայի գլխավոր մեծագործությունը.

Իմ սիրելի ժողովրդյան թշնամին,
Որ միշտ կամեր գայլի նման պատառել,
Ես շատ անգամ իմ սուսերով ահագին
Ստիպեցի մեր աշխարհեն ելանել (2, 13):

«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»: «Ժողովրդյան թշնամուն մեր աշխարհեն» վռնդելու գաղափարն ավելի որոշակի մարմնավորված է այս պոեմում, որը լավագույնն է Պատկանյանի այս ժանրի գործերից: Այն գրվել է Եղիշեի, Փարպեցու մատյանների, Ալիշանի «Բլբուլն Ավարայրի» պոեմից ստացած անմիջական ներշնչանքով: Սրբադասված հերոս Վարդան Մամիկոնյանի նահատակության չափածո գեղարվեստական պատմությունն ու նրա պատգամախոսությունն է՝ ուղղված հայ նոր սերունդներին:

Չափածո այս երկի ժանրատեսակը հեղինակը նույնպես վիպասանություն է անվանել: Սա ավելի հասուն գրչի ու գեղարվեստական մտքի արգասիք է: «Բարեկամական նվեր Մկրտիչ Սանասարյանին» ընծայագրով այն նվիրված է ազգային մեծ բարերարին, որի միջոցներով հիմնվել էին Վանի Սանդուխտյան-Մարիամյան իգական դպրոցը, Կարինի Սանասարյան վարժարանը, բազմաթիվ այլ հայ դպրոցներ Ռուսաստանում եւ այլուր, որոնց կտակել է իր ամբողջ հարստությունը:

Սա քնարապատմողական պոեմ է՝ բաղկացած նախերգանքից ու վերջաբանից եւ Լուսնի պատմությունը ներկայացնող 15 հատվածներից: Անշուշտ քնարական են Լուսնին ուղղված՝ հեղինակի դիմումը եւ վերջաբանը, որով հեղինակն ամփոփում է Վարդանի սխրանքի մասին Լուսնի պատմությունը եւ սերունդներին հղում իր պատգամախոսությունը:

Ղ. Ալիշանի նման՝ Պատկանյանը եւս իր պոեմի նախերգանքում դիմառնությամբ դիմում է անձնավորված Լուսնին, հարցնում նրա տխրության պատճառը: Գոհ է Լուսինը բանաստեղծի՝ «մուսային պարկեշտ որդեգրի» այդ հարցումից, որովհետեւ դարերի ընթացքում միայն նա է ամենատես Լուսնի տխրությամբ հետաքրքրվողը.

Շատ դար եմ պահել մայրագույթ խնամով
Օտարի գաղտնին սրտիս մեջ, բայց ո՞վ
Մի օր բարձրացուց աչքերը երկին
Ու կարեկցաբար հարցուց — «ո՛վ Լուսին,
Ինչո՞ւ ես տըխուր, գունաթափ դիմոք,
Ի՞նչ ցավ է սըրտումդ, ի՞նչ ցավ, ի՞նչ մորմոք»: –
Գոհ եմ, գոհ քեզնից, պարկեշտ բանաստեղծ,
Ինձ ըսփոփեցին քու խոսքերն անկեղծ...» (2, 18):

Սրա պատասխանը 3-րդ դրվագով սկսվող «Լուսնի պատմությունն» է, որով Պատկանյանը Նահապետի «Հայոց աշխարհիկ» երգի օրինակով ներկայացրել է երբեմնի ծաղկուն Հայաստանի սքանչելիքները, նրա ավերումն ու անշքացումը, պարսից եւ հայոց մեծ զորաշարժը դեպի Տղմուտ գետի ափ, Ավարայրի ճակատամարտն ու Վարդան Մամիկոնյանի սխրագործությունը: Ալիշանի հետ

գրական ազգակցության հավաստումներից մեկը կարելի է համարել այդ դրվագի սկզբում Նահապետից վերցված բնաբանը՝

Ի հոն են ծնել մեր հարքն առաջին,
Որ հետ Ադամա զԱստված պաշտեցին:

Չի կարելի ասել, թե Լուսնի պատումը զուտ էպիկական է, իսկ նախերգանքն ու վերջերգը՝ զուտ քնարական, որովհետեւ այս երկը մի ամբողջական վիպասք է, որի միջնամասում էլ ակնհայտ են պատումին միահյուսված հեղինակային վերաբերմունքի ուղղակի դրսեւորումներ եւ քնարական երանգ ունեցող այլ միջամտություններ ու արտահայտություններ: Այսինքն՝ չեզոք, անկողմնակալ պատում, ինչպես սովորաբար էպիկական երկերում է լինում, ըստ էության, չկա: Նրա մեջ Վարդանանց պատերազմի՝ քնարականին միաձույլ էպիկական ասքի հետ միավորված են զինվորների եւ Վարդանի երգերը, որոնք բացահայտ քնարական բնույթ ունեն:

Ի դեպ, Պատկանյանը Եղիշեին ու Վարդան Մամիկոնյանին անդրադարձել է տարբեր տարիների գրած ստեղծագործություններում, որոնց մեջ հպանցիկ է արժեւորել Վարդանի սխրանքը: 1872 թ. գրված «Եղիշե» բանաստեղծության գերխնդիրը, օրինակ, ոչ այնքան Վարդանանց սխրանքի մեծարումն է, որքան «Ավարայրի սոխակ» հռչակված Եղիշե պատմիչի հեղինակության եւ նրա «ոսկեշունչ գրքույկի» պատմական դերի արժեւորումն ու փառաբանությունը եւ հաճախակի ընթերցման անհրաժեշտության ընդգծումը.

Հայ պատանի, շուտ-շուտ կարդա՛
Այս գըրքույկը ոսկետառ,
Որ համոզվիս, թե մեր հայը
Կորչելու ազգ չէ՛ իսպառ (1, 102–103):

Այս երկում, սակայն, հեղինակի հիմնախնդիրը Վարդանանց պատերազմի ու Վարդանի սխրանքի արժեւորումն է, Վարդան Մամիկոնյանի պատմական անձնավորության գեղարվեստական կերպարի կերտումն ու նրա սխրանքը նոր սերունդներին առավել ամբողջական ներկայացնելը:

Դարերի մշուշից Պատկանյանը սահմանազատում, պայծառացնում եւ նոր ժամանակների առջեւ է դնում պատմական իրական եւ Եկեղեցու կողմից սրբադասված հերոսի հիմքի վրա ստեղծված գրական կերպարը, որը, որպես հայոց ոգու եւ կենսական ուժերի խտացում, ստույգ գիտակցում է, թե որոնք են մեր ազգային դժբախտությունների պատճառները եւ հանուն ինչ սրբազան նպատակի է զոհաբերում իր կյանքը: Վարդանը՝ որպես պատմական անձնավորություն ու մարդկային բնավորություն, Լուսնի պատմության միջոցով ընթերցողին է ներկայանում որպես այսօրվա մարդ եւ մտերիմ զրուցակից:

Շարունակությունը՝ էջ 6, 7

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ էջ 5

Թե՛ հեղինակի եւ թե՛ ընթերցողի համար կողմնորոշիչ են եւ մյուս բնաբանները, որոնք Պատկանյանը դրել է համապատասխան բաժինների սկզբում: Այսպես՝ հորից՝ Գաբրիել Պատկանյանից, նա վերցրել է հետեւյալ բնաբանը.

Հառաջ մատիք ինձ լսել
Շառավիղք քաջին Հայկա,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասեր գործ Վարդանա:

Սրան հաջորդող 6–8-րդ հատվածներում Վարդանը ներկայացված է որպես հայոց պատմական հիշողության ծնունդ: Նա բնական եւ օրինաչափ շարունակությունն է Հայկի, Արամի, Տիգրանի եւ մյուսների, որոնց մոռացել են հաջորդ սերունդները, եւ այդ իսկ պատճառով Հայաստանը կրել է անդառնալի կորուստներ: Ողբալի է Հայաստանի եւ հայության ներկա կացությունը, որ Վարդանին մղում է հայրենիքի եւ նրա սրբությունների արժեւորման, ապրելու իմաստավորման, մարդկային ներքին անասելի տանջանքների եւ անհնարին իրավիճակներում կյանքի գնով փրկության որոնման:

Պոեմում հաջողված է Վարդանի բարոյական ներքին բարդ պատերազմի պատկերը: Օրհասական պահին ծանրածանր մտատանջությունները նրան մղում են խորհելու հայրենիքի, ծնողների, կնոջ ու զավակների եւ մնացած ամեն ինչի մասին: Նրա եզրակացությունը հստակ է. առանց հայրենիքի մնացածը ոչինչ է, ուրեմն՝ ճշմարիտ է եղել նախնիների առաքինի վարքը, որ ամեն ինչ ստորադասել են գերագույնի՝ հայրենիքի առաջ, ուստի նախնիներն արժանի են փառքի, բարի հիշատակի ու խոր հարգանքի: Բայց հաջորդների մեղքով Հայաստանը գնացել է անկումից անկում, եւ պարսից գերտերության դեմ լինել-չլինելու ներկա պատերազմը դրա հետեւանքն է: Պետականության կորուստը, անկյալ երկրի մասնատված վիճակը, օտարի գերիշխանության հանդուրժումը ներելի չեն նոր սերունդներին: Այս գիտակցությունն է Վարդանին հարկադրում՝ անցյալի փառքերը հիշելով՝ ողբալ հայրենի կորուստները եւ դաժան թշնամու հանդեպ լցվել արդար վրեժի սուրբ զգացումով:

9-րդ հատվածի բնաբանը վերցված է Հ. Չոքքեից. «Կարծիք կա, որ հոգին ունի մի գաղտնի զորություն իր ապագա վիճակը կանխազգալու»: Այս կանխազգացումը շատ է մռայլ: Տեսիլի նման նրա մտքի հանդիման հայտնվում է ապագա Հայաստանը՝ ավելի թշվառ, հայ բազմամարդ քաղաքներն ու գյուղերը՝ ավերակ ու գրեթե ամայի, հայ սերունդները՝ ավելի ողորմելի: Հասել է գործելու վճռական պահը: Իր անելիքը նա որոշում է աներկբա: Ավարայրի ճակատամարտում նա հայ զինվորների հետ միասին կարեւոր անելիք ունի: Նախ նրանց պիտի ազատագրի ներքին վախից ու ստրկությունից եւ ներշնչի գալիք հաղթանակի հավատով.

Մահի՞ց վախեցաք, ամոթ է հային
Իր ազատ կյանքը փոխել ըստրկին,
Մա՛հ, մա՛հ, ե՛կ շուտով, սեւցուր իմ կյանքը,
Ինչպես սեւացավ հայերուս փառքը:
Դե՛հ, վերջին անգամ հորանց տաղերով
Կռվենք ու մեռնինք պարսից թըրերով» (2, 26):

Վարդանի այս կոչը հայ զինվորների վրա ունենում է զորավոր ներգործություն. ճանապարհի հոգնածությունը եւ պարսից գերակշիռ զորական ուժից վախը թոթափած զինվորները Վարդանին արձագանքում են երգով՝ «Զինվորները երգում են», իսկ երգը բարձր ոգեւորության արտահայտություն է: Զորավարն ինքն էլ զինվորներին պատասխանում է բովանդակալից երգով: «Վարդանի երգը» պոեմի գաղափարական ու զգացմունքային բարձրակետն է: Այն, որպես խղճի ազատության համար հեռավոր անցյալում մեր ժողովրդի մղած պայքարի հուժկու դրսեւորումներից մեկը, խտացնում է հայության մեջ դարերով կուտակված ըմբոստությունն ամեն տեսակի բռնության, քաղաքական ու սոցիալական անարդարության, ազգային ու կրոնական հալածանքների դեմ եւ ունի ընդգծված արդիական բովանդակություն: Պատահական չէ, որ համազգային հիմներգի արժեք ու կշիռ ունեցող այս նշանավոր երգը գեղարվեստական ինքնուրույն միավորի կարգավիճակով շրջում է ժողովրդի մեջ ու չի իջնում նրա շուրթերից.

...Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դավով, հրապուրանքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարհից Հայկա անունը,
Հիմքից կործանեց Թորգոմա տունը,
Խլեց մեզանից թագ, խոսք եւ զենք,–
Հիմի է՞լ լռենք:
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռամերձ եղավ,
Գառնազգեստ գայլին մեզ գըլուխ դըրավ:

(Գրականագիտությունը (Արսեն Տերտերյան, Աշոտ Հովհաննիսյան եւ ուրիշներ) հակված է եղել կարծելու, թե «գառնազգեստ գայլ» այլաբանությամբ հեղինակը նկատի է ունեցել Գաբրիել Այվազովսկուն: Առավել համոզիչ է Մ. Սաղյանի այն պնդումը, թե նա Գաբրիել Այվազովսկին չէ, որը մինչեւ 1859 թ. եղել է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչ, այլ հոգեւոր ամենաբարձր իշխանություն ունեցող «գլուխը»՝ Ներսես Աշտարակեցին, որը 1855 թ. արդեն տասը տարի Ամենայն Հայոց կաթողիկոս էր եւ Պատկանյանների հանդեպ կիրառել է խստագույն պատիժներ. Գաբրիել քահանային բանտարկել է տվել, նրա զավակներ Ռափայելին եւ Հովհաննեսին հեռացրել Լազարյան ճեմարանից: Ըստ Մ. Սաղյանի համոզիչ բացատրության՝ նրա առիթով է գրված նաեւ «Դեւ Մրուս» ստեղծագործությունը (տես *Մ. Սաղյան*, նշվ. գիրքը, էջ 125–127, տողատակի 9-րդ ծանոթագրությունը)):

Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղոթենք,–
Մինչեւ ե՞րբ լռենք:
Թո՛ղ լռե մունջը, անդամալույծը
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի եւ սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք –
Ու այնպես լըռենք (2, 27–28):

Շարունակությունը՝ էջ 7

1920 թվականի հայ-թուրքական պատերազմի դասերն ու այսօրվա իրականությունը...

Սկիզբը՝ էջ 5

Շնորհիվ հարձակման հանկարծակիության եւ զորքերի թվական գերակշռության՝ թուրքերը շարժվեցին դեպի Հայաստանի խորքերը: Հայ ժողովուրդը կանգնած էր նոր ցեղասպանության վտանգի առջեւ:

1920 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի կառավարությունը դիմեց ամբողջ աշխարհի քաղաքակիրթ մարդկությանը՝ խնդրելով դատապարտել ու կանգնեցնել թուրք վանդալների արշավանքը: Սակայն արեւմտյան տերությունները գրեթե չարձագանքեցին այդ կոչին: Թերեւս միայն Խորհրդային Ռուսաստանն էր, որ փորձեց միջամտել ռազմական այդ կոնֆլիկտին եւ թույլ չտալ, որ թուրքերը վեջնականապես ջախջախեն Հայաստանը (հակառակ այն բանի, որ Քեմալ Աթաթուրքն իրեն հռչակել էր մեծ հեղափոխական եւ հոկտեմբերյան հեղափոխության ջահակիրը Արեւելքում): Սակայն գործնականապես վճռական միջամտություն այդպես էլ չեղավ: Հայաստանը գտնվում էր Արեւմուտքի՝ Ֆրանսիայի, Անգլիայի եւ բոլշեւիկյան Ռուսաստանի հակամարտ հարաբերությունների կիզակետում, ուստի եւ այդ տերություններից իրական աջակցություն ստանալու հնարավորությունները սակավ էին ու մշուշապատ:

Իսկ թուրքական զորքերը շարունակում էին գրավել նորանոր տարածքներ եւ մահ ու ավեր սփռել ամենուր: Երկրում համազգային աղետալից վիճակ ստեղծվեց: Կարծես թուրքերին դիմադրելու ուժ, կարողություն եւ ռեսուրսներ այլեւս չկային: Արագորեն գրավված էին Սարիղամիշը, Կարսն ու Ալեքսանդրապոլը: Թուրքական զորքերը գտնվում էին Երեւանից ընդամենը 15 կմ հեռավորության վրա: Լկտիացած իրենց ունեցած անսպասելի արագ հաջողություններից՝ թուրքական առաջնորդները նորանոր ծանր ու խայտառակ պահանջներ էին դնում Հայաստանի կառավարության առջեւ: Վերջինս այլեւս ի վիճակի չէր փոխելու իրադարձությունների զարգացման ծայրահեղ անհաջող ու ծանր ընթացքը եւ ժողովրդին հանելու հայրենական պատերազմի: Ավելին. գտնվելով անելանելի վիճակում՝ դաշնակցական իշխանությունները փորձում էին քաղաքական նոր օրիենտացիա ձեւավորել եւ լեզու գտնել թուրք բարբարոսների հետ: Այդ առումով ուշագրավ է Երեւանում լույս տեսնող դաշնակցության պաշտոնաթերթի՝ «Հառաջի» հետեւյալ դիտարկումը. «Իր փրկության համար Հայաստանն ունի միայն մի ճանապարհ. գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարեւան թուրքի հետ: Հայ ժողովուրդը կամենում է ապրել եւ ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատեւորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա» (*«Հառաջ», Երեւան, 20 նոյեմբերի 1920 թ.*):

Սակայն մեր պատմությունը դարեր շարունակ ապացուցել է, որ լրիվ ու միանգամայն անմտություն է հույս դնել թուրքի ողորմածության վրա: Թուրքը երբեք չի բարձրացել քաքաքակրթական որոշակի աստիճանի եւ հեռու է Մարդ լինելու նրա ճամփան:

Եվ այդ մասին աներկբա վկայում են դարերի թուրք ոճրագործների կատարած ռազմական ու այլ կարգի հանցագործությունները, որոնք հանցագործություններ են առհասարակ մարդու, մարդկության եւ մարդկայնության դեմ:

1920 թվականի հայ-թուրքական պատերազմը վերջինը եղավ հաջորդ հարյուր տարիների համար: Այդ պատերազմի արդյունքները թուրքերն արագորեն ու հնարամիտ կերպով արձանագրեցին 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրի դրույթներում: Իսկ Մոսկվայի պայմանագրի դրույթները պարտադրվեցին նաեւ Խորհրդային Հայաստանի կառավարությանը 1921 թ. հոկտեմբերին՝ Կարսում կնքված պայմանագրով: Զրկվելով իր կենսական բոլոր տարածքներից՝ հայ ժողովուրդը հայտնվեց փակուղում:

Պատմության դասերը երբեք չպետք է մոռանալ կամ անտեսել: Այլապես հայ ժողովուրդը մշտապես հայտնվելու է նոր ողբերգությունների շեմին:

Մեր ժողովրդի փրկությունը հավաքական ուժի, միասնական բռունցք դառնալու եւ ողջ ազգով արագորեն մարտունակ բանակի վերածվելու կարողության մեջ է, ինչը, սակայն, չկարողացանք անել 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված արցախյան պատերազմի օրերին՝ թուրքական նոր ագրեսիային դիմադրելիս եւ դիմակայելիս:

1920 թ. թուրքական վերջին ագրեսիայից անցել է 100 տարի, սակայն, ինչպես տեսանք, մեր ժողովրդի համար թուրքական յաթաղանից սպասվող վտանգը մշտապես մնում է օրակարգային եւ իրատեսական:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ



Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24

Հաջի Չելեբին պատրաստ է անգամ հագուստավոր կրոններ փոխելու, միայն թե կարողանա վրեժխնդիր լինել դավադիրներից: Նա դեմ է դուրս եկել անիրավություններին: Տռուզյաններից հետո կարգը կփոխանցվեր ուրիշներին, այդպես Իսխելի անիրավությունների շղթան կշարունակվեր: Ժամանակը բոցավառում է անպարտված լինելու զգացումը: Հավատափոխությունից հետո, ինչպես նրա մուսուլման կինն է Սրմային պատմում, նա օրվա ընթացքում միայն երկու ժամով գնում է մաքսատուն, վերադառնում տուն, հյուրեր չի ընդունում, ոչ ոքի հյուր չի գնում: Զբաղվում է իր պարտեզի ծաղիկների խնամքով: Եթե Հաջի Չելեբին խուսափում է մարդկանցից հավատուրացության պատճառով, ապա Իսխելն էլ ամոթից տանից դուրս չի գալիս՝ մտածելով միայն վրեժխնդրության մասին:

Ընդհանրապես հոգեբանական փայլուն տեսարաններով հարուստ «Նոր Բյուզանդիոն» դրամայում մի շարք նկարագրություններ, տեսարաններ ու պատկերներ հասնում են դասական կատարելության: Աճուրդի տեսարանը, ամբողջ երկրորդ պատկերը, որտեղ ներկայացվում է Հաջի Չելեբու հավատուրացությունը, սուլթանական սարայում նրա ու իր հակառակորդների ակամա հանդիպումը եւ այլ հանգամանքներ գեղարվեստական անթերի հյուսվածքներ են:

Գնալով վրեժխնդրության ծավալներն ընդարձակվում են: Իսխելը կնոջն ասում է. «Սպանում են ինձ, հա, հասեք, կախաղան են բարձրացնում ինձ: Դա միայն աստծո հիմարը կարող է անել...» (*նույն տեղում, էջ 315*):

Հալետն ու Իսխելը համաձայնության են գալիս: Հալետը հանձն է առնում լուծել նրա վրեժը: Փոխարենը Իսխելը արտասահմանից եկող անօրինական եւ կեղծ ոսկին պետք է գրանցեր իր անունով: Եթե Հալետի անունով գար, ու իրեն բռնեին, Իսխելն այդ դեպքում ոչինչ անել չէր կարողանա: Իսխելի կինը համաձայն չէր, որ ամուսինն այդպիսի վտանգների ենթարկեր իրեն ու ընտանիքը, սակայն վրեժի համար նա ամեն ինչի պատրաստ էր: Իսխելը կաշառում է մաքսատան աշխատողներից մեկին, որպեսզի Հալետին պատկանող կեղծ ոսկիները ստուգման չենթարկվեն, բայց Իսխելին նավահանգստում տեսնող Հաջի Չելեբին սկսում է կասկածել, որ ինչ-որ բան այն չէ: Կարգադրիչն էլ նրան ամեն կերպ ցանկանում է համոզել, որ գրասենյակում շատ գործեր կան, բայց Հաջի Չելեբին ոչ միայն չի գնում, այլեւ Նազիրի հետ սկսում է ստուգել ապրանքները: Նա «Նուրբ տեսակի մեխեր» անունով արկղում հայտնաբերում է կեղծ ոսկիներ, իսկ կարգադրիչին խորհուրդ տալիս. «Ես քեզ ազատեցի մի վտանգավոր արարքից. պահիր ոսկիները մոտդ, եւ ուրիշ առիթով թող ոսկիները չշլացնեն քեզ այդպիսի վտանգավոր խոստումներ տալու: Երիտասարդ ես եւ հանդուգն, բայց այդ բոլորը անարժեք եւ անուժ են իմաստության առաջ» (*նույն տեղում, էջ 332*):

Հաջի Չելեբին Նազիրի հետ սուլթանին պատմում է կեղծ ոսկիների մասին: Սուլթանի հրամանով գլխատում են Հալետին ու Իսխելին: Հաջի Չելեբին լուծում է իր վրեժը:

Դրամայում սոցիալական գիծը հիմնականում տրված է նախավերջին պատկերում՝ բեռնակիրների վիճակի նկարագրությամբ, ինչպես նաեւ սուլթանական սուրայում երիտասարդ ներքինու ու ծերունու զրույցում: Բեռնակիրները մեջք են ծռում՝ մի կտոր հացի գումար վաստակելու համար մի երկրում, որտեղ սրբություն չկա: Եվ ահա ինչ է ասում ծերունի ներքինին. «Աշխարհի մասին մի բան անհրաժեշտ է գիտենալ, մնացածը հեշտ է. պետք է գիտենալ, որ աշխարհը կանգնած է շողոքորթության, ստի եւ փառասիրության սյուների վրա. այս իմանալուց հետո ամեն բան կիմանաս, ամեն գործում կլինես իմաստուն եւ հաղթական: Պետք է շողոքորթես իշխանավորներին, պետք է ստես ընկերոջդ եւ սողոսկես ավելի ու ավելի բարձր դիրքեր: Փողոցային հասարակ եւ տգետ մարդիկ այժմ նազիր եւ վեզիր են մեր սարայում այս երեք առաքինություններով: Մեր երկրորդ սենեկապետը հինգ տարի առաջ Ղալաթիայում պոռնկանոցի տեր էր, սողոսկեց մինչեւ արքունիքի դռները, եւ դու կտեսնես, որ մի օր նազիրներից մեկը կանհետանա, եւ սենեկապետը կդառնա նազիր» (*նույն տեղում, էջ 335*):

Ամբողջ դրամայում ակնառու է հեղինակի պատմական մոտեցումը, նոր հայեցակետով անցյալի սոցիալ-հասարակական սովորույթների հմուտ վերլուծությունը: Հենց այսպիսի կոնկրետ պատմական մոտեցման շնորհիվ են անհատականացել կերպարները՝ Հաջի Չելեբին, Հալետը, Իսխելը, սուլթանը եւ մյուսները:

Դրամայի գլխավոր կերպարը Հաջի Չելեբին է: Նա հայրենասեր է, ընտանիքին նվիրված մարդ, որն իր ազգականների կողքին է կյանքի դժվարին պահին: Մահապատժի են ենթարկվել Տռուզյանները, Իսխելը աճուրդի է հանում նրանց ունեցվածքը: Դեռ ավելին. Հաջի Չելեբին փորձում է ապահովել Տռուզյանների ընտանիքի կանանց անվտանգությունը, բայց նրա արժանապատվությունը վիրավորվում է, երբ Իսխելը թքում է սկիհի մեջ: Հաջի Ձելեբու ապտակը դառնում է գործողությունների ծավալման միջոց: Նա խարդախ Իսխելից ու Հալետից վրեժ լուծելու համար ստիպված է լինում փոխել կրոնը եւ ամուսնանալ մուսուլման կնոջ հետ: Եթե Հաջի Չելեբին այդ քայլին չդիմեր, ապա նա էլ Տռուզյան եղբայրների նման կդառնար Հալետի ու Իսխելի խարդավանքների զոհը: Իսկ հավատափոխությունն ու սուլթանի շնորհած պաշտոնը մաքսային ծառայությունում Հաջի Ձելեբուն հնարավորություն կտային պայքարելու անիրավությունների դեմ՝ վրեժ լուծելով խարդախ եւ անիրավ մարդկանցից:

Հավատափոխության գնալու քայլը Հաջի Չելեբին միանգամից է անում, բայց հեշտ չէր նրա համար: Նա կտրվում է իր ընտանիքից՝ կնոջից ու աղջկանից, որոնց շատ սիրում էր: Սուլթանը ցնծությամբ է ընդունում այդ լուրը եւ իր վերարկուներից մեկը հագցնում է Հաջի Չելեբուն՝ իբրեւ գնահատանք նրա ազնիվ արարքի: Չելեբին խոնարհաբար ու համեստորեն հրաժարվում է Անգլիայի դեսպանի, արքունի գանձապետի պաշտոններից, որ սուլթանն էր նրան առաջարկում: Դրանցից ոչ մեկը, որքան էլ հզոր դիրք ու իշխանություն ունենար, չէր կարող հնարավորություն ընձեռել ծնկի բերելու Իսխելին: Մինչդեռ Իսխելի ու Հալետի նման խորամանկ մարդկանց հնարավոր էր իրենց դիրքից ցած գցել՝ մաքսատան ղեկավարությունը ստանձնելով: Երբ Իսխելը փորձում է մաքսատնից անցկացնել Հալետին պատկանող կեղծ ոսկի դրամները, Հաջի Չելեբին՝ իբրեւ օրինապահ, սուլթանին ու նրա արքունիքին հավատարիմ մարդ, ներքին մեծ հրճվանքով մերկացնում է Իսխելին՝ իրողության մասին հայտնելով սուլթանին: Ուշագրավ է, որ սուլթանին ուղղված միակ խնդրանքն այն էր, որ մուսուլման կնոջ հետ ամուսնանալուց առաջ գոնե մեկ անգամ տեսակցի իր ընտանիքին եւ սուլթանից խնդրում է նաեւ ապահովություն իր ընտանիքի համար:

Երբ դահճապետը տանում է Իսխելին ու Հալետին, հռհռում է Հաջի Չելեբին, ինչպես դրամայի սկզբում հռհռում էր Իսխելը, երբ գլխատման էին ենթարկվում Տռուզյան եղբայրները: Նա ծիծաղում էր նախեւառաջ Իսխելի վրա, որ ցանկանում էր հիմնահատակ ոչնչացնել իր թշնամի Տռուզյանների ցեղը, այնուհետեւ նա ծիծաղում էր Օսմանյան կայսրության վրա՝ սուլթանից մինչեւ ստորին թուրք ծառան, որոնց հիմարացրեց իր ուրացությամբ՝ պայմանավորված ոչ թե «ճշմարիտ կրոնի» լույսով, որն իբր թե ոգեւորել է դիմելու այդ քայլին, այլ միայն Իսխելին վնասազերծելու եւ նրանից վրեժ լուծելու սեւեռուն նպատակով: Ծիծաղում է նաեւ իր վրա, որ ի վիճակի եղավ մասնակցելու արյունով ու բարոյական անվերականգնելի կորուստներով լի խաղին: Չելեբու ծիծաղը բխում է իր հոգու ալեկոծությունից: Չէ՞ որ հավատուրացության հեշտությամբ չէր գնացել: Այդ քայլից հետո Հաջի Չելեբին գրեթե չէր շփվում մարդկանց հետ եւ զբաղվում էր միայն իր պարտեզի ծաղիկների խնամքով: Այստեղ միավորվում են երկու հակադիր զգացումներ՝ հաղթանակի բերկրանքը եւ հոգու տառապանքը: Երկրորդը, բնականաբար, ավելի բարձր է հնչում, քանի որ ծնվում է կորստի ցավից:

Չնայած Հաջի Չելեբու նման քայլին՝ կինն ու դուստրը ատելությամբ չեն լցվում նրա նկատմամբ: Երբ նրա կնոջը՝ Սրմային, այցելում է Հաջի Չելեբու մուսուլման կինը, դստեր հետ նա մեծ շուքով ընդունում է Նազմիեին, սիրով հյուրասիրում է, թանկարժեք նվերներ տալիս եւ խնդրում հոգ տանել ամուսնու մասին: Մեծահոգի կնոջն անգամ դուր է գալիս ամուսնու մուսուլման կինը, ուրախանում է, որ ամուսինը ապահով ձեռքերում է:

Հաջի Չելեբու հակապատկերն է Իսխելը, մարդ, որն զբաղված է հարստություն կուտակելով: Հալետի հետ նա խարդավանքների մեջ է մտնում, սուլթանի առաջ դավաճանական մեղքեր վերագրում Տռուզյաններին: Նրանց պատճառով սուլթանը հրամայում է գլխատել Տռուզյան եղբայրներին: Վրիժառության մոլուցքով տարված Իսխելը ցանկանում է պատժել Հաջի Չելեբուն, քանի որ վիրավորվել է նրա արժանապատվությունը:

Շարունակությունը՝ էջ 8

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ էջ 5, 6

Պոեմում Պատկանյանը եղիշեից, Փարպեցուց ու Ալիշանից ստացած ներշնչումներով է պատկերել Ավարայրը եւ կերպավորել նրա հերոս Վարդան Մամիկոնյանին: Այս պարագայում պատմական դեպքերի ճշգրտությունն այնքան կարեւոր չէ, որքան ռոմանտիկ հեղինակի հզոր երեւակայությամբ հյուսված ռազմի տեսարանների եւ դրանց մեջ Վարդան-դյուցազնի անօրինակ հերոսության եւ սխրալի մահվան՝ ճշմարտացիության չափ հավաստիություն ներշնչող պատկերը: Ավարտվել է ճակատամարտը, ոչ ոք լուր չունի Վարդանից: Այն դյուցազուն հերոսը, որի թրով թշնամու մեծաքանակ զինվորները մժեղի պես էին ոչնչանում, եւ որի հարվածներից թշնամական բանակի բլրաչափ ահռելի փղերը քարաժայռի պես էին գլորվում, զոհվե՞լ է արդյոք, թե՞ գերի ընկել...

Բայց ահա գոռ ճակատամարտում կարեվեր խոցված Վարդանը, մահացու նետը սրտի մեջ ցցված, տեսիլքի պես գիշերով հայտնվում է իր անքուն զինվորներին՝ մահից առաջ նրանց հղելու վերջին պատգամը: Վարդանի մեջ խոսում է Սիամանթոյի բանաձեւած «դարերու վրեժը».

–Լավ է մեր կյանքը կարճանա սրրով,
Քան հալվի, մաշվի թըշնամու լըծով...
...Դեհ, մնաք բարեւ, Տեր, ամ իմ հոգին,
Ազատ կյանք կամ մահ ազնիվ տուր հային:–
Լռեց, ու իսկույն նետը մահաբեր
Հանեց աներկյուղ կրծքից կարեվեր (2, 32):

Տարբեր առիթներով հեղինակն ընդգծել է, որ երկի գաղափարական ընդհանրացումը եւ հիմնական ասելիքը 16-րդ հատվածն է: Սերունդներն ինչպես են ընկալում եւ իմաստավորում Վարդանի մահը, եւ ինչով է ավարտվում Լուսնի պատմությունը:

Նախ՝ Վարդանի մահը Ավարայրից ի վեր ծանրագույն կորուստ էր, որովհետեւ նա հայրենասիրության գլխավոր չափանիշն էր.

Կորավ Դյուցազնը – կորավ Հայաստան,
Չի հայոց միակ հույսն էր Վարդան,
Թըշվառ հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետեւ չսիրեց ոչով (2, 33):

Ուրեմն՝ անհրաժեշտ է, որ նոր սերունդները հատկապես Վարդանի՛ սիրով սիրեն հայրենիքը: Ի վերջո այս է հայրենին փրկելու համար Վարդանի եւ Ավարայրի բոլոր 1036 վկաների նահատակության անմահ խորհուրդը:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը

Սկիզբը՝ 2020-ի թիվ 23–24

Զորյանի «Օրիորդ Մարիամը», «Կատակ» պատմվածքների հերոսներն իրենց վարքագծով եւ էությամբ, թվում է, պայմանավորում են իրադարձությունների հետագա ընթացքը:

«Տխուր մարդիկ» ժողովածուի մեջ ընդգրկված «Կամաց խոսեք» պատմվածքի հերոս Դավիթ Դանիելյանը Ս. Գեւորգ եկեղեցու երեսփոխն է, ծխական դպրոցի հոգաբարձուն, մարդասիրական ընկերության անդամ, քաղաքային դումայի իրավասու, սանիտարական հանձնաժողովի նախագահ եւ տնատեր ու պատվավոր քաղաքացի:

Զորյանի հերոսները վախենում են իրականությունից, նրանց մշտապես ուղեկցում են սարսափն ու անվստահությունը, այդ պատճառով էլ նրանք զգույշ են, չափից ավելի լարված: «Կատակ» պատմվածքի անանուն հաշվապահն իր համար ստեղծել էր նույնպիսի «պատյան», ինչպիսին Պրոպոսի հերոսը: Հաշվապահը եւ Պրոպոսը ավելի հակված են դեպի սեփական պատյանը: Սակայն նախորդ պատմվածքների հերոսների համեմատ նա դեմ առ դեմ հանդիպում է այլ կյանքի հնարավորությանը: Համակրանք տածելով մի երիտասարդ կնոջ նկատմամբ՝ նա գիտակցում է իր «պատյանի» ողջ տաղտկալիությունը եւ, մերժում ստանալով, ի վերջո ինքնասպանություն է գործում: Զորյանը չի խորանում հանգամանքների մեջ, չի պարզաբանում պատճառները, սակայն պարզ է դառնում, որ այդ հերոսը կարող էր կրկնել Պրոպոսի նույն մտքերը. «Արժե՞ ապրել այդ կյանքի համար»:

«Պրոպոս» պատմվածքը նույնպես «Տխուր մարդիկ» շարքում է ընդգրկված: Վարակվելու երկյուղից ահագնացած՝ հերոսը չի ամուսնանում եւ նույնիսկ գիրք չի կարդում: Զորյանի հերոսներին միավորում է նրանց նեղ եւ սահմանափակ էությունը, ատելությունը կյանքի նկատմամբ: Նրա հերոսների անհատականացված կերպարներ են, իրենց մեջ կրում են ժամանակի ոգին, տարբերվում են նաեւ իրենց մարդկային նկարագրով: Զորյանը կատարելագործեց

արձակի այդ ձեւը՝ հարստացնելով «ինքնատիպ ու ազգային» շատ կողմերով: Գրողի վերաբերմունքն իր «տխուր մարդկանց» նկատմամբ միակողմանի չէ: «Տխուր մարդիկ» ժողովածուն հատկանշական է նրանով, որ Զորյանը ոչ միայն հայտնաբերել է նոր հերոսների՝ «տխուր մարդկանց», այլեւ գրելու նոր եղանակ ու ձեւ:

Զորյանի առաջին՝ «Տխուր մարդիկ» գրքին բնորոշ շատ առանձնահատկություններ իրենց դրսեւորումն են գտնում հենց աննկատելի «մանրուքների մեջ», իրերի աշխարհում: Ցանկացած նովելում հեղինակը բեւեռում է ընթերցողի ուշադրությունը առաջին հերթին հերոսի շրջապատի վրա, որովհետեւ համարում է կարեւոր՝ որտե՞ղ է նա, ովքե՞ր են նրա հետ, ի՞նչ իրեր են նրան շրջապատում: Զորյանն իր ստեղծագործության նյութը դարձրեց 20-րդ դարի առաջին կեսի սոցիալական ու քաղաքական բարդ իրադարձություններում հայտնված «փոքր մարդու» հոգեբանությունն ու ճակատագիրը: «Տխուր մարդիկ» ժողովածուում հավաքված պատմվածքները գրված են 1913—1917 թթ. եւ ունեն մեծ ընդհանրություններ թե՛ արծարծված հարցերի, թե՛ գեղարվեստական ձեւի առումով: Զորյանը գրականություն էր բերում իրեն մանկությունից ծանոթ գավառական քաղաքի կյանքն ու տիպերը, «տխուր մարդկանց» տառապանքը, առօրյա ծանր հոգսերն ու դաժան միջավայրի պատկերները: Ժողովածուի հերոսները հասարակության այն շերտերի ներկայացուցիչներն են, որոնք ամբողջ կյանքում տառապում են թե՛ նյութապես, թե՛ բարոյապես, թե՛ տանը, թե՛ դրսում, ապրում են առանց վաղվա օրվա հավատի, անաղմուկ, գորշ, ձանձրալի կյանքով:

«Տխուր մարդիկ» շարքով Զորյանը գրականություն էր բերում հերոսների, որոնց նմանները կային ռուս եւ եվրոպական գրականությունների մեջ: Դրանք Գոգոլի, Դոստոեւսկու, Չեխովի, Մոպասանի փոքր ու խեղճ մարդիկ էին, բայց արդեն հայկական տարազով ու հոգեբանությամբ, հայ իրականության մեջ: Այդ մարդիկ կյանքի ընդհանուր հորձանքից դուրս մղված, մեկուսացած, իրենց պատյանի մեջ քաշված մարդիկ են, որոնք կարծես ո՛չ անցյալ ունեն, ո՛չ ապագա: Նրանք ապրում են միայն տվյալ պահի գիտակցությամբ, նրանց կյանքը քարացել-անշարժացել է մի կետում՝ փոքր ու մեծ հոգսերի մեջ:

«Տխուր մարդիկ» շարքում պատկերված են փոքր քաղաքի բնակիչները, աղքատ ուսանողները, ծխական ուսուցիչները, դպրոցի վերակացուները, գյուղական քահանաները, մանր խանութի գործակատարները: Զորյանը կարողանում է թափանցել մարդու հոգու խորքերը, հարազատորեն պատկերում է դաժան միջավայրի արտաքին ճնշումը մարդու վրա, բացահայտում է կյանքի տերերի եւ խորթ զավակների, արտոնյալների եւ ոչ արտոնյալների հարաբերությունը, անձուկ կյանքով ապրող մարդկանց ներաշխարհը: Նկարագրելով այդ մարդկանց՝ գրողը ոչ թե ծիծաղում է նրանց վրա, այլ խորապես ցավում. նա ցավում է «Շաքարամանը», «Վճռական մարդը», «Կատակ», «Բարեկամներ» պատմվածքների կամազուրկ, բախտից հալածված հերոսների համար, որոնց կյանքում չնչին դեպքը դառնում է ողբերգության ու տառապանքի աղբյուր: Այդ պատմվածքներն ավարտվում են խոր թախիծով, որովհետեւ դրանց ենթատեքստը «անմեղ մեղավորների» նկատմամբ տածած մարդասիրական քնքուշ սերն է, որովհետեւ այդ մարդկանց պատրանքներն ու ամենաչնչին ձգտումները խորտակվում են՝ հանդիպելով միջավայրի անտարբերության ժայռին (*Սովետահայ գրականության պատմություն, առաջին հատոր, Երեւան, 1961, էջ 7*):

Պատմվածքների հիմքում ընկած փաստերն այնքան աննշան են, որ երբեմն հիշեցնում են կենցաղային սովորական անեկդոտներ, բայց ամբողջ խնդիրն այն է, որ այս մանեւրը Չեխովից եկող «գիտակցված

գրական մանեւր էր»՝ ավելի ցայտուն ընդգծելու այն ահավոր հակադրությունը, որ կար մանրացած, խեղանդամված մարդու եւ նրան այդպես դարձնող միջավայրի միջեւ:

Շարունակելի

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

Սկիզբը՝ էջ 7

Միեւնույն ժամանակ հասկանում է, որ հեշտ չէ Հաջի Չելեբու դեմ որոգայթներ հյուսելը: Խորամանկ Իսխելը վրեժ լուծելու համար անգամ պատրաստ է վատնել իր ողջ հարստությունը: Նա ի վերջո ընկնում է Հալետի թակարդը: Վերջինս զբաղվում է կայսրություն կեղծ ոսկիների ներմուծմամբ: Երբ Հաջի Չելեբին ստանձնում է մաքսատան ղեկավարի պաշտոնը, արդեն վտանգվում է նրա գործունեությունը, եւ որոշում է իր վրայից պատասխանատվությունը գցել Իսխելի վրա՝ փոխարենը նրան խոստանալով վրեժ լուծել Հաջի Չելեբուց: Երկու խարդախներն ի վերջո ընկնում են իրենց հյուսած թակարդն ու գլխատվում: Սուլթանը նույն սառնասրտությամբ, որով հրամայել էր գլխատել Տռուզյաններին, ինչպես նաեւ շատերին, որոնք ընդդիմանում էին իրեն, հայրենակիցներին գլխատելու որոշում է կայացնում, իսկ ինքն առանց խղճի խայթ զգալու գնում է իր հաճույքների հետեւից. «Ողջ աշխարհը վաղուց քնած է, իսկ այս սրիկաները վրդովում են իմ գիշերը: Արարողապետ, ննջարան ուղարկիր վրացուհուն: Գնա՛նք» (*նույն տեղում, էջ 344*):

Անհատի ու մարդու երկփեղկ, երկիմաստ կյանքն այնպես կենդանի է ներկայացրել գրողը, որ ընդհանրական պատկերացում է տալիս սուլթանական պետության մասին,



որտեղ ապրելը կամ պարզապես գոյություն պահպանելը հնարավոր էր միայն մարդկային բարոյական արժեքների անվերադարձ կորստի հաշվին: Ահա թե ինչպես է կայսրության եւ մարդկային արժեքների մասին խոսում դրամայի հերոսներից Իսխելը. «Մի կողմից՝պետք է բարեկամանամ իմ թշնամու հետ, մյուս կողմից՝ իմ ամբողջ հարստությամբ կաշառքներ բաժանեմ իսլամ մեծամեծներին, մինչեւ գտնեմ իմ թշնամուն դատապարտելու մի փոքրիկ առիթ: Կաշառքը հիմքն է այս կայսրության: Իսխել, հավաքի՛ր քո բոլոր ուժերը, երկրպագի՛ր, կռացի՛ր ներքին անշիջելի ատելությամբ, ժպտա՛ արտաքուստ, իսկ ներքուստ դիզի՛ր դեղին մաղձ» (*նույն տեղում, էջ 316*):

Իսխելի գործողությունը, նրա կերպարի դրամատուրգիան մարմնավորում են նրա արարքները, բայց դա չի նշանակում, որ վերջինները երկրորդական դեր ու նշանակություն ունեն: Այսպիսի դասավորությամբ Թոթովենցը կառուցում է Չելեբու վրիժառության արդարացիությունը՝ այն իմաստավորելով կերպարին բնորոշ իմաստախոսությամբ: Իր որոնումներում ու գործողություններում նա որքան դաժան է, նույնքան ազնիվ ու արդարամիտ: Չելեբին հաղթում է ոչ միայն նրա համար, որ ավելի ուժեղ է, քան Իսխելը, այլեւ օժտված է մարդկային բարձր արժեքներով եւ պայքարում է այդ արժեքների վերականգնման համար: Չելեբու հաղթանակը նաեւ պայմանավորված է նրա մարդկային, թեկուզեւ դաժանորեն ընթացող, սակայն բարձր իդեալի գոյությամբ: Ահա թե ինչ է ասում նա Տռուզյան եղբայրների մորը. «Հարգում եմ ձեր վիշտը, տիկին, զգում եմ ցավի թույնը, որ սողոսկում է ձեր մայրական սիրտը, բայց կա մի ուրիշ մեծ բան, մեծ տիկին. ողջ մի սերունդի գոյության հարցն է դրված մեր առաջ: Պետք է փրկել այդ սերունդի հավատքը՝ փրկելու համար սերունդը» (*նույն տեղում, էջ 344*):

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.01.2021 թ.
Տպաքանակը՝ 1175